



## EXPLANATORY NOTE

According to the proposed project, the COAF Smart Center is to be placed on the highest level of the available land plot. It is depicted on the relief with a regular oval-shape concavity. The three horizontal planes that form the highest peak of the territory create the overall space of the Smart Center, including the the courtyard. It corresponds to the countours of the highest horizontal plane plant. The overall space of the structure is 3500 sqm excluding the territory of the courtyard.

Through hiding the structures into the relief, the architecture tends to emphasize the peculiarities of the semi-desert climate zone, its rough and coarse surfaces and the linkage with with the subtle outlines of the mountains in the far background.

Because the area has very unique nature, it is proposed that during greening the territory, some areas, especially the adjacent areas of the Smart Center) are left in its original form -(dry soil cover), with sparcely dotted medium-sized stones that create very unique texture. It is suggested to consider this texture as the main detail of the architectural character and material.

The concept of the structure is totally considered within the relief. It is possible to easily walk onto the relief-roof from the North-Eastern side. A big part of the parking is also within the relief and is located next to the structure. It has a possibility of a separate direct entrance to the Center that can be used when necessary (e.g. during precipitation welcoming the guests and allowing access to the Center without getting wet). Similar relief roofs are proposed for the compound Entrance and for the Events Centre, which is planned to be placed a bit far from the Educational Center, adjacent to the nearby road in order to prevent criss-crossing the various functionally different flows.

The place of the Educational Center is justified not only to ensure an unobstructed view, but it also ensures isolation from the noise and movements from the main road connecting with the highways.

The concept of the structure, as a separated body, with a dug hole on the summit of the hill with a courtyard with pulsh vegetation, can be interpreted as a crater of an intellectual volcano. This "erupting green body" as if an oasis in the surrounding scenery symbolizes the main value to which the creative thought and potential of the children should serve to.

In the internal functional zoning, especially the workshops for arts and painting are oriented towards north-eastern direction to ensure the view of the most dominant view of the territory - the view of Mt. Aragats. The views of Yoga, Dance and other action-orineted activity rooms are oriented towards Mt. Ararat. All rooms open towards outside space. The hallways connecting the rooms have the logic of natural illumination from the ceilings (openings on the ceiliengs to let sunlight in - yerdiks).

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ըստ ներկայացվող նախագծի Քոաֆ Սմարթ կենտրոնը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող հողատարածքի ամենաբարձրադիր հատվածում, որը ռելեֆի վրա արտահայտված է կանոնավոր օվալաձև գոգավորությամբ: Հանույթի վրա տեղանքի ամենաբարձրադիր գագաթը գոյացնող 3 հորիզանականները կազմում են Սմարթ կենտրոնի ընդհանուր մակերեսը՝ ներառյալ ներքին բակը, որը համապատասխանում է վերջին՝ ամենաբարձր հորիզոնականի ուրվագծին: Առանց ներքին բակի՝ կառույցի մակերեսը կազմում է 3500 քմ.:

Տարածքում առկա շինությունները թաքցնելով ռելեֆի մեջ՝ ճարտարապետությունը միտում ունի գովերգելու կիսաանապատային գոտու առանձնահատկությունը, նրա չեչոտ ու կոպիտ մակերեսի ներդաշնակ կապը հեռակա պլաններում նրբորեն ներգծվող սարերի հետ: Քանի որ տեղանքն ունի շատ յուրահատուկ բնություն՝ առաջարկվում է, տարածքը կանաչապատելու դեպքում՝ որոշ հատվածներ (մասնավորապես Սմարթ կենտրոնին հարող հատվածը) թողնել իր նախնական չոր հողածածկույթով, որտեղ ցանցառ ձևով սփռված միջին չափսերի քարերը շատ յուրահատուկ վայրի ֆակտուռա են ձևավորում: Առաջարկվում է հենց այդ ֆակտուռան դիտարկել որպես օգտագործվող ճարտարապետական նյութի և կերպարի գլավոր տարր:

Կառույցի ծավալատարածական հորինվածքը ամնբողջապես առնված է ռելևի մեջ: Հյուսիս-արևմտյան կողմից թեթև թեքությամբ քայլելով կարելի է բարձրանալ ռելեֆ-տանիքի վրա: Կայանատեղիի մի մեծ հատված կրկին ռելեֆի մեջ է և գտնվում է կառույցին կից: Այն ունի դեպի կենտրոն առանձին մուտքի հնարավորություն՝ անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ եղանակային տեղումնառատ օրերին առանց թրջվելու հյուրերին դիմավորելու համար) օգտագործելու համար: Նմանատիպ ռելեֆային տանիքով հորինվածքներ ունեն նաև ավանի մուտքը և միջոցառումների կենտրոնը, որը նախատեսվում է իրականացնել ուսումնական կենտրոնից հեռու, կից անցնող ճանապարհին մոտ՝ տարբեր ֆունկցիոնալ հոսքերը միմյանց հետ չխաչաձևելու համար:

Ուսումնական կենտրոնի տեղակայումն ընտրված վայրում նպատակահարմար է ոչ միայն ամենաազատ տեսադաշտն ունելու առումով, այլև ապահով մեկուսացված է դեպի մայրուղիներ տանող գլխավոր ճանապարհների շարժից և աղմուկից:

Որպես առանձին ծավալ՝ հողատարածքի գագաթին փորված ներքին բակով և նրանում առկա փարթամ բուսականությամբ կառույցը, կարելի է մեկնաբանել իբրև հրաբխային մտքի խառնարան, որի միջից օազիսի նման առանձնացող ու <<վեր ժայթքող կանաչը >> խորհրդանշում է այն գլխավոր արժեքը, ինչին պետք է ծառայի մանուկների ստեղծագործական միտքն ու պոտենցյալը:

Ներքին ֆունկցիոնալ գոտևորման մեջ կարևորվել է արվեստի և նկարչության սենյակների համար առավել նպատակահարմար հյուսիս-արևելյան կողմնորոշումը և Արագած լեռան տեսարանը, որը տեղանքում առավել արտահայտիչ է դիտվում: Յոգայի, պարի և մյուս՝ ավելի աշխույժ բնույթի սենյակները նայում են Արարատին: Բոլոր սենյակները բացվում են դեպի դրսի տարածություն: Սենյակները միմյանց կապող միջանցքները վերևից երդիկային լուսավորության հնարավորություն ունեն:



# ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ԱՎԱՆ ԱՐՄԱՎԻՐ
# COAF SMART CAMPUS ARMAVIR












ՀԱՏԱԿԱԳԻԾ
PLAN


ԿՏՐՎԱԾՔ 1-1
SECTION 1-1


ԿՏՐՎԱԾՔ 2-2
SECTION 2-2


ԿՏՐՎԱԾՔ 3-3
SECTION 3-3


ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՃԱԿԱՏ
NORTH ELEVATION


ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
EVENT CENTER


ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԿ
EDUCATIOANAL FACILITY COUTYARD